Այս արձանը պատկանում է ճապոնական արուեստի ամենանշանաւոր գործերի թւին. արդէն ճապոնացիք ընդհանրապէս շատ են յայտնի բրօնզը ձուլելու արհեստովը: Արձանի դէմքը հիացում է պատճառում իր արտայայտութեան գեղարուեստական խորութեամբն ու վեհութեամբը: Այդտեղ պարզ դրոշմւած է աստուածային անվրդով ու վեհափառ անդորրութիւնը, այդտեղ պարզ դրոշմւած է մտքի յաղթանակը մարմնի վրա եւ կրքերի սպանումը կամքի ոյժով:

⁂

Մինչ գնացքը արագ սլանում էր դէպի Տօկիօ, մենք վագօնում ծանր ու բարակ կշռում էինք ու դատում, թէ չը նայելով ճապոնական կեանքի համբաւաւոր էժանութեանը՝ այնքան էլ մեզ էժան չէր նստել առաջնակարգ հիւրանոցներում մեր կենալը, իսկ երբ գնացքը մտաւ Տօկիօ, մենք արդէն վճռել էինք մի փոքրիկ սենեակ վարձել քաղաքի ծայրում, խոյս տալով մեծ հիւրանոցներից: Երկար հարթակով վագօններից գնում էինք դէպի կայասրահը, երբ յանկարծ կարծես գետնի տակից մեր առաջը բուսաւ մի ճապոնացի լայն յարդէ գլխարկը գլխին, յարձակւեց իսկոյն մեր իրերի վրա ու քաշ տւեց առանց այլեւ այլութեան դէպի իր փոքրիկ կառքը:

Բոլորս իրար անցանք:

Իմ զայրացկոտ բողոքների դէմ նա լուռ ու հանգիստ մեկնեց ինձ մի քարտ, որի վրա Ֆրանսերէն գրւած էր. «Հետեւեցէք նրան, նա ձեզ կառաջնորդէ Emile Jiraud-ի մօտ, որ ապրում է ծովեզրի մօտ, քաղաքի ծայրում...»:

Ձեռագրի շարունակութիւնը այնքան խառնակ էր ու շփոթ, որ ես ընթերցումն ընդհատեցի, ենթադրելով, որ պարոն